



## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0009 ք.Երևան, Կորյուն 17

«18» մայիսի 2023թ.

### Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Մասիս Արմենակի Մելքոնյանին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրն իրավունքի ուժով ուժի մեջ մտնելու վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի «Դատավորի նշանակման կարգը» վերտառությամբ 117-րդ հոդվածի համաձայն՝

1. Թեկնածուի համաձայնության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը նրա թեկնածությունն առաջարկում է Հանրապետության նախագահին՝ ներկայացնելով նաև նրա անձնական գործը, թեկնածուի՝ դատավոր չլինելու դեպքում նրա կողմից ներկայացված և դրանց ստուգման արդյունքով ձեռք բերված փաստաթղթերը:

2. Առաջարկությունն ստանալու պահից եռօրյա ժամկետում Հանրապետության նախագահին ընդունում է ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ հրամանագիր կամ առաջարկությունն առարկություններով վերադարձնում է Բարձրագույն դատական խորհուրդ:

3. Հանրապետության նախագահի կողմից Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությունն առարկություններով վերադարձվելու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը պարտավոր է նիստ հրավիրել:

4. Բարձրագույն դատական խորհուրդը Հանրապետության նախագահի առարկությունը չընդունելու հարցը քննարկում և որոշում է կայացնում խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ: Եթե Բարձրագույն դատական խորհուրդը չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում ընդունում է ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ հրամանագիր կամ դիմում է Սահմանադրական դատարան:

5. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ առաջարկությունը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ընդունում ներկայացված թեկնածուին նշանակելու վերաբերյալ:

6. Եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում չի կատարում սույն հոդվածի 2-րդ, 4-րդ կամ 5-րդ մասերում նշված գործողությունները, ապա համապատասխան թեկնածուին նշանակելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով, ինչի մասին Բարձրագույն դատական խորհրդի նախագահը եռօրյա ժամկետում հրապարակում է հայտարարություն դատական իշխանության պաշտոնական կայքում:



7. Բարձրագույն դատական խորհրդի կողմից Հանրապետության նախագահի առարկությունն ընդունելու դեպքում թեկնածուն հանվում է դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակից:

Բարձրագույն դատական խորհրդի նախագահի 2023 թվականի մայիսի 3-ի թիվ ԲԴԽ-1Ե-3533 գրությամբ Հանրապետության նախագահի քննարկմանն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի մայիսի 2-ի «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր նշանակելու համար Մասիս Մելքոնյանի թեկնածությունն առաջարկելու վերաբերյալ» թիվ ԲԴԽ-46-Ո-150 որոշումը:

Հանրապետության նախագահի 2023 թվականի մայիսի 8-ի գրությամբ Բարձրագույն դատական խորհրդին են ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի մայիսի 3-ի թիվ ԲԴԽ-46-Ո-150 որոշման վերաբերյալ առարկություններ, որոնք քննարկվել են Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի մայիսի 12-ին հրավիրված նիստում և չեն ընդունվել:

Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի մայիսի 12-ի թիվ ԲԴԽ-1Ե-3753 գրությամբ կրկին Հանրապետության նախագահի քննարկման է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի մայիսի 2-ի «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր նշանակելու համար Մասիս Մելքոնյանի թեկնածությունն առաջարկելու վերաբերյալ» թիվ ԲԴԽ-46-Ո-150 որոշումը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 117-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում Հանրապետության նախագահի կողմից Մասիս Արմենակի Մելքոնյանին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր նշանակելու վերաբերյալ հրամանագիր չի ընդունվել և համապատասխան դիմում չի ներկայացվել Սահմանադրական դատարան՝ **հայտարարվում է, որ Մասիս Արմենակի Մելքոնյանին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրն իրավունքի ուժով ուժի մեջ է մտել 2023 թվականի մայիսի 18-ին:**

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Վ. ՔՈՉԱՐՅԱՆ